ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » հունիս 2024թ. No 3429 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/614-24 առ 11.06.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման հանձնաժողովի հանձնակատար Նաիրա Ռոմանովային՝

Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի հունիսի « 21 » - ի N3429 - Ա հրամանի

ԳՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՂԵՐ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Նանոտրոպիլ նովո	ֆոնտուրացետամ	դեղահատեր	100մգ; (10/1x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում	Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Ցենտեմո ՍՊԸ, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2, Ռուսաստան- որակի հսկող (մանրէաբանական)	Ռուսաստան	Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2	Ռուսաստան	Դ	22106 11.06.2024
2	Սենադեքսին	կալցիումի սենոզիդներ A և B	դեղահատեր	70մգ; (10) բլիստերում	Լուբնիֆարմ ԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Բարվինկովա փ. 16	Ուկրաինա	Լուբնիֆարմ ԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Բարվինկովա փ. 16	Ուկրաինա	ԱԴ	22107 11.06.2024
3	Բժշկական Սպիրտ 96%	Էթանոլ	խտանյութ արտաքին կիրառման լուծույթի	96%; 100մլ պլաստիկե տարա, 250մլ պլաստիկե տարա, 500մլ պլաստիկե տարա, 1000մլ պլաստիկե տարա	Նատալի Ֆարմ ՍՊԸ, Արշակունյաց պողոտա 127/12, Շենգավիթ, Երևան- բալք արտադրող, փաթեթավորող, բաց թողնման հսկող, Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9, Հայաստանի Հանրապետություն- որակի հսկող	Հայաստանի Հանրապետություն	Նատալի Ֆարմ ՍՊԸ , Աբովյան փ.42, տ.2, Երևան	Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	22108 11.06.2024

4	Ռեհիդրոն	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ	դեղափոշի դեղաչափված	3,5գ+2,5գ+2,9գ+10գ; (20) փաթեթիկ 18,9գ	Ֆարմակոր Փրոդակշն ՍՊԸ, Ինտ. Տեր. Կնյազևո գյուղական ավան, Լենինսկի պ., 140, լիտ. Ֆ, 1Հ/2Հ/5Հ, Սանկտ Պետերբուրգ- երկրորդային փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Ռեցիֆարմ Պարետս Ս.Է.Ռ., Ս/Ռամոն և Կահսալ 2, 08150 Պարետս դել Վալես (Բարսելոնա), Իսպանիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, Էքսպերտ Բիո ՍՊԸ, Ինստիտուտսկի պ., 21, շ. 2, Սանկտ Պետերբուրգ, 194021, Ռուսաստան- որակի հսկող (միկրոբիոլոգիական)	Ռուսաստան	Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, ք. Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2	Ռուսաստան	ԱԴ	22109 11.06.2024